

ԲԱՏԱՆՈՐՈՒ ԱԳՐՈՒՄ	
Վերջին համար	10 Կր.
Տարեկան	5 Կր.
Վեցամսեայ	3 Կր.
Մասնատար համար	12 Կր.
Վեցամսեայ	6 Կր.
Սկզբնական համար	2.0 Կր.
Տարեկան	1.25 Կր.
Վեցամսեայ	0.62 Կր.
ԿԱՆՈՒՄ ԿՆՆՈՒՄ	

Իսկուցանալու սուր անարիկ երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երկինս անի անգլաներու համար 20 010 զեղջ կրկայ:

ՇՈՒԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԶՈՒՆՆԵՐԻ ԵՒ ՇՈՒԱԹ ՕՐԵՐԸ

Եստակ և գրավ գրկնչ
Խմբագրութեան հասցիք
Redaction du journal
«Charjoun»
Varna (Bulgarie)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՄԵԾԵՐԸ ՄՐՑՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՀԱՅԻՆ

Ռուսաստանը նախանձում է Գերմանիային՝ որը ամէն ճիգ թափում է առանց մի «պոսե-րանցի» զինուորի արկունը թափելու, միմիայն Սուլթանի զլուխը իւր քանով, իրապէս տէր դառնալ Ասիական Տաճկաստանին. Բաղդատ-Բասորա-Գոնեաի երկաթուղիի գիծը, Փոքր-Ասիոյ մէջ հիմնուած և հիմնվելիք Գերմանական գաղութները ամենաշուշափելի փաստերն են գերմանական այդ հարստահարիչ ձեռնարկներին:

Գերմանիայի նպատակն է Սուլթանի երկիրը տնտեսականապէս տիրապետել, և այդ նպատակին հասնելու գործում նա օրէ օր առաջ է անցնում:

Ռուսիան իրան համարելով ուղիղ ժողովուրդ փատիչահաների խարխուլ պետութեան, այդ երկրից խլած ամէն մի կտոր հողի համար գետերով արկուն է վազեցրել և մինչև օրս չէ կարողացել Տաճկաստանի այն օդուարը քաղել, նրա վրա այն ազդեցութիւնը ունենալ որ առաջ ունէր Անգլիան, իսկ այսօր Գերմանիան: Եւ այդ պատճառով էլ նախանձում է, ուզում է մրցել:

Ռուսական «նովոյէ վրէժիտ» թերթը, ամենայնզուգն կերպով առաջարկում է Ռուս կառավարութեան, Բաղատի երկաթուղիի գծի նշանակութիւնը, այսինքն Գերմանական ազդեցութիւնը կտորելու և Սուլթանի վրա միշտ բռնանալու համար՝ գրաւել Բուրգասը և վերածել պատերազմական նաւահանգիստի, որպէսզի պէտք եղած ժամանակ կարելի լինի արագ և գիւրու-թեամբ ճնշում բանեցնել Սուլթանի վրա և իր ուղածը կատարել տալ:

Ռուս շովինիստ թերթը այդ քայլը անհրաժեշտ է համարում:

և իրագործելու ամենայնպէս ժամանակը, որովհետև Անգլիան՝ Ռուսիայի աշխարհակալական ձեռնարկներին ամենազօրեղ և ամենակատարի հակառակորդը՝ զբաղված է Թրանսպալի պատերազմով և թերթի կարծիքով, բոլորովին անկարող պէտք է լինի խոչնդոտ հանդիսանալ Ռուսաստանին:

Մէկ խօսքով Գերմանիա և Ռուսաստան մրցման մէջ են. երկուսն էլ ուզում են յոշոտել «հիւանդ մարդու» փթած մահիկի հովանաօրութեան տակ զտնված երկիրները: Եւ Սուլթանին ինչ, առժողը ինքը չէ այլ երկրի հարազատ բնակիչները. ինքը արդէն վաղուց համոզված է թէ ոչ կամ կանուխ այդ հողերը և նրանց հարստութիւնը պէտք է իր ձեռքից երթան:

Այս, Սուլթանին ինչ, նրա ինչ փոյթը թէ՛ էր Ասիական նահանգները կը խլեն. սեւ սեւ խորհրդածուծութիւնները Սուլթանին չեն պաշարում, այլ մեզ, հայրիս, որովհետև այդ երկու աշխարհակալ պետութիւնները մրցումը մեր հաշիւն է. մեր հայրենիքի, և մեր ջրի համար է:

Գիշակեր անգլիաների նման այդ երկու գաղանները վրա են թըռչում կլանելու այն երկիրը, որ մեր որրանն է, որ գարեբով ուսողում է մեր ժողովրդի արիւնով, որ, զժբախտաբար, չենք կարողացել վայելել զոհ և ուրախ սրտով:

Մեծերը մրցում են մեր սեփականութիւնը տիրելու համար, մեզ իբր առանձին ազգ գոյութիւն ունենալու միակ պայմանը ոչնչացնելու համար:

Իսկ մենք ինչ անենք, քաղաքադէտ յիպոփոսական գրազէտներ. սպասե՛նք, քարոզե՛նք հայ ժողովրդին չչտապել հարաբազատ երկրին տիրանալ...

ՊՈՒՐԿԱԶ ԵՒ ՊԱՂՏԱՍ

«Նօփօէ վրէժիտ»-ին առաջնորդող յօդուածը, այս վերնազրով, ամբիտի տեսութիւն մը ընելով օրուան քաղաքականութեան կիշիչ հարցերու վրայ, աչքի առաջ ունենալով Հարաւ-Ափրիկէի սազնապալի գործերու ընթացքը, և գերմանական գաղութներուն ընդլայնումը Ասիոյ մէջ, և իրենց ձեռք բերած ազդեցութեան օր-աուր սպառնական ձև առնելին, Քոնեա-Պաղատաի երկաթուղիի գծով, ռուս թերթը միակ յարմար առիթ կը սեպէ իբրև հակակշիռ գերմանական ազդեցութեան հարաբախյալ յառաջադիմութեան, հետեւեալը:

«Մի անհրաժեշտ քայլ—պէտք է Պուրկազի մէջ մեր ծովային ուժերու համար կայարան մը հաստատել, այս կերպով հիմնել զինուորական կառան մը թուրքերը գիտելու: Առողմենք զուգընթացաբար պիտի պահենք Պուրկազի և Ռուսիանի նշանակութիւնը և ուղղակի աւելի մօտ պիտի ըլլանք թուրքիային: Անշուշտ սա հաճելի չը պիտի ըլլայ անոր, զուցէ յառաջ բերէ գաղտնի այն իրաւունքներուն հիման վրայ որ Սուլթանը ունի Պուրկազի վրայ, սակայն Պուրկազի անկախութիւնը միթէ ժամանակին քաղաքական հարց չէ՞ եղած որ մեր օրերուն յարմար չըլլայ!»: Եթէ Սուլթանը 1885ին շատ գիւրութեամբ ուսանաց ազմուկի զրկուեցաւ Պուրկազի վրայ ունեցած գերիշխանական իրաւունքներէն, ինչ պիտի ընէ հիմայ մեր այս գործին հանդէպ. ի հարկ է ոչինչ, ինչպէս կերեւայ, որով հրաշալի կերպով փակած պիտի ըլլանք այս դարը: Եթէ ու Սուլթանին անախորժ է. մեծ սխալ մը ըրած պիտի ըլլանք, երբ ենթադրենք թէ մեր Արեւելքի մէջ հետապնդած նպատակին պիտի հասնինք միայն անտան, երբ միանք անփոփոխ ու հաճելի ամէնուն և ամբողջ Եւրոպային: Արիշներու տրամա-

զրութիւնը շատ քիչ արժէք ունի մեզի համար—մենք մեր գործին նայինք:

Մեր Պուրկազի մէջ ամբանալը—ի հարկ է Պուրկազի հաւանութեամբ, իրեն առաջին ու անխտաստիելի հետեւանքն ունի՝ թուրքիոյ Ասիական ու եւրոպական ուժերու կլարածանումը, որոնք Փոքր-Ասիոյ մէջ մինչև հիմա բաւարար կերպով բաժանուած չէին շնորհիւ յարմար հարգակցական գծերու բացակայութեանը: Փոքր-Ասիական սահմանը ինքնին կիսով չափ պիտի կորսնցունէ արդի արժէքը և Պուրկազի վրայ ունեցած նշանակութիւնը, որովհետև եւրոպական թուրքիոյ գծի հետ քաղաքատեմը շատ հեռացած պիտի ըլլայ. սուր հետ միասին Պաղատաի երկաթուղին այ մեզի համար իր անչափ ազդեցին նշանակութիւնը կորսնցուցած պիտի ըլլայ: Ծատ պարզ է որ, երկրին խորքերը կեղծուեցած թուրք զօրքը չը պիտի կրնայ իբր պահեստ—յնտարան մը ծառայել ասիական սահմանազլիսի՞ր կէտերուն վրայ որ ըլլայ:

Մեր Պուրկազի մէջ հաստատուելը, Պուրկազի խորհուրդներուն զօրավիգ պիտի ըլլայ. ստով մեզի կարելիութիւն պիտի սայ, հարկ եղած միջոցին, Սուլթանին նեցուկ ըլլալ ժամանակին, եթէ պղտոր շուրի եւրոպայի ձկնորսներէն ամանք՝ իրապէս կաշխատին Արեւելքի խաղաղութիւնը ու հանգարտութիւնը խոտվել: Արեւելքի անգործութիւնը վերապահելու այս շանոր անկարելու չէ:

Պուրկազի մէջ մեր ամբանալը ինքնին մեծ զոհերու կարոտութիւն չունի, որովհետև ներկայիս Օտտոսայի և կովկասեան նահանգներու մէջ աւելորդ զօրաց պահեստի գունտեր կը պահենք. միթէ մեզի համար միևնոյն չէ, վոխանակ Օտտոսայի մէջ Պուրկազ պահել: Պուրկազի մէջ իր հակոգութեան նշանակութիւնը անհամեմատ զօրացած պիտի ըլլայ: Եւ ալ պէտք չէ խարուինք ու հիմակուանէ խոստովանինք որ

4170

—)(—)

Պաղատի երկաթուղին առանց ասոր ալ մեզ պիտի հարկադրէ կրկնապատկելու մեր կազմակերպութեանը: Այս եղանակաւ Պուրկաղը զօրացնելով մեր կողմէն պահած զօրքերուն թիւը կէսի պիտի իջեցնենք, որ միեւնոյն հետեւանքներ պիտի ունենան: Իբրև հող Պուրկաղ մեզի բնաւ պէտքապահութիւն մը չունի, ինչպէս կարելիոր — գիտարան (նապիւտութիւնը բունքը) պիտի ընենք: Պուրկաղի հետ համաձայնութեան գալը շատ հեշտ պիտի ըլլայ երկու կողմերուն ալ ընդհանուր գահացում տալով: Այս կերպով մենք խախտած չը պիտի ըլլանք տիրապետական իրաւունքները: Ընդհակառակը՝ պիտի գտնուինք միեւնոյն կայսրութեան մէջ, ինչ որ 20 տարի առաջ եւրոպան լուծեամբ պիտի թողնէր: Երբ չհետեւեալ ինչպէս Պիզմարքի ինքնախոստովանութեան, ոչ ոք կը սպասէր որ օքսբուրի պայմանագրով լրանալէն յետոյ պիտի հեռանայինք Պուրկաղէն:

Պուրկաղի մէջ մեր այս յարաշարժումը, իբրև միջազգային ֆակտ չենք նկատեր: Այդ Պուրկաղի և Ռուսիոյ կը վերաբերի, որոնք հանգամանքներուն միակ գիտողներն են: Այս գործը արտաարժէք կարեւորութիւն ունի միայն մեզի համար: Այդ մեր կողմէն Պաղատի երկաթուղիի յատկապէս բնական լրացուցիչ հետեւութիւն պիտի ըլլայ:

Իսկ ամբողջ աշխարհի գործերու ներկայ կայսրութեանը մէջ մասնաւորութիւն մը պիտի կազմէ, զոր պիտի իրագործենք:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

Վանայ ժողովրդին դժբաղդութիւնները զեռ վերջ չգտան. ձախորդութիւնները՝ այնքան սիրակերպով կապուած են մեր ճակատագրին հետ՝ որ ամենամեծ զոհողութիւնները անգամ ապարդիւն կը ըլլան եւ անձնուէր ու ազնի սրտերը կը վհատին տեսնելով որ իրենց ամբողջ նուիրատուութիւնները չեն բուեր դարմանելու համար կորուստը որ մեծ է, անհուն է:

Անցեալ աշնան եւ այս գարնան՝ ժողովուրդը մեծամեծ ջանքեր թափեց որպէս զի ինքզինքը գտնայ, անցեալ տարուայ հունձքէն է՛ն ընտիր մասը ցանեց վտանգելով նոյն իսկ ինքզինքը քուրդին դէմ որ կը պահանջէր ցորենին լաւագոյնը:

Ճարանացի արեղանիւրու ձեռքով հարիւր հատի չափ եղեր բաժնուեցան. ինչ որ պահանջին փոխարէն շատ քիչ էր, վասնզի մեծ գիզեր կան որոնք հաս մը իսկ չունին, զորոք ինակ Արճէյ եւ Դարապանաբղ գիւղերը, որոնք անցեալ տարի ամբողջովին կողոպտուեցան եւ թալանուեցան Հաճի պէյի կողմէն:

առանց դոյզն մեր ու չը ցրուելու մեզի նպատակակէտ ընտրած հարցերէն, ինչպէս նաեւ միջազգային բնութիւն կրող դէպքերէն: Բայց և այնպէս հաշիւ մէկը պիտի ունենայ ի՞նչ մը կամ իրական իշխանութիւն մը աւելի մեծ նշանակութիւն տալու թրքական արեւելքի մէջ՝ մեր այս մասնաւոր գործին: Եթէ իրապէս, զերբ մանական դրամագլուխները տրբեն ու իրենց պահանջումները գիւրայայտ կը ըլլան, ինչո՞ւ Ռուսիոյ ռազմային շահերը անարժէք ու երկրորդական տեղ գրաւեն!:

Աստորիան շատ մտազուարէ իր բաւարարողական պայթիւններովը և մինիստրական յարախօփութիւններովը. այսպիսի միբաղդախնդրական ձեռնարկ մը ընելու և իր օտքի տակ կը ռուսներ յաւիտեանս կորոնցնելու վտանգին չը պիտի ենթարկուի:

Անգղիան միշտ կը վտիճայ իր զրահաւորներովը, բայց նա վաղուց պէտք էր պաշտօնապէս յայտնէր, որ այդ ծովափներու համար, մեզի հետ իր յարաբերութիւնները չի խզէ: Նամանակաւ հիմակ՝ ոչինչ իրական բան մը չը հետեւի, մինչև իսկ Պուրկաղը զուրս դանք — ո՛ր մնաց Պուրկաղ. շատ օրինակներ ունին որ Անգղիա իր զէնքը չը վերցնէր ամուր ու խաղաղ գիւրացիներու թեան գէժ. ի հարկէ, նա լաւ գիտէ որ եթէ հաճոյք կը զգայ թատերական պատյաներ ընել իր մարտանաւերովը, հոն կըրնայ վտանգի մը հանդիպիլ անտեսանելի գիպուածներէն. և ինչո՞ւ մազապուր ըլլայ այդ ծովափներու համար! Ի՛նչ անգ-

ղիական եղած է Պուրկաղ մէջ (.) միթէ գերմանիային համար ցոյց [պիտի ընէ որ իրեն ոչինչ կը խօստանայ] (.) Անգղիային համար մեծ անխոհեմութիւն մը պիտի ըլլայ, եթէ այդ տեսակ քայլ մը առնէ. իր գիւրացիները զինքը կը դատապարտեն, Վոսփորէն իրեն գտանգ չը կայ:

Մեզմէ կախում ունի Պուրկաղին տալ՝ այս կամ այն նշանակութիւնը. ատով պիտի հասնինք առանց մեծ զոհարբութիւններու և առանց մեր զինուորական պիւտեմէն բարձրացնելու, միանգամ ընդ միշտ վերջացնելու ու տեղն ու տեղը բեւեռելու թուրքիոյ այն զինուորական ուժերը որ Պաղատի գիծը պիտի երեւան հանէ: Թէ իր ներքողականներու զորք ի վառապանձութիւնը և թէ իր տաքութիւնը հովհաւրած պիտի ըլլանք:

Այս յօդուածի խիղախու սպառնական ոճը իր որոշ ու բացայայտ ակնարկութիւններովը, մեզ թիւր մեկնութիւններ ու մանրամասնութիւններ տալէն կազատէ. ալ լուսի պէս պարզ է որ ռուս գիւրացիները Բոսփորէնի մը շտընչնական ծրագրի իրագործման հաստատ պահանջան մը կը փնտռէ և Պուրկաղը յարմար գտած է. և հոն «գիտարան» չը պիտի ըլլայ ինչ որ անկեղծօրէն նօսփօէ-Վրէմիան կըսէ, այլ քիչ ատենէն զրահապատ ու անմերձ ենալի մարդկոցներու պիտի վերածուի: Հոն ամբարտնոց պիտի ըլլայ ռուսական Սեւծովան նատորմիլին. հոն մշտական հիւր պիտի մնան ռուս մարտանաւերը ու իրենց ուժերը պիտի կազդու-

րեն աւելի նպատակաւոր արշաւանքներու համար: Բոզաւագիւրը չի սքողեր իր բուն գիտաւորութիւնը և կըսէ. «Եւս 1853 Նիկոլա կայսրը մտադրած էր վերջնական պէս իր հաշիւները մաքրել Սուրթաններու հետ, բայց իր նէսէլ-բոզ քանցելին անստով «քիչիկ մը սպասել» աւելի «յգոյշուոր միջոցներ» ձեռք առնելու», ամէն բան կորուսինք և 5 ամիս յետոյ աս գին դաշնակցութիւն մը կազմուեցաւ մեզի դէմ և Սէփասաբոյի աղետաբեր պատերազմը ծագեցաւ:

Նօսփօէ-Վրէմիան այս յօդուածը յուզած ու վառած է եւրոպական մամուլը. ամէն տեղ սուր քննադատութիւններ սկսան երեւնալ, և զինուորական թերթերն ալ շուշայան իրականութիւնը մերկացնել. ֆրանսական «պայակոյտի թերթերէն» «Սէն-Քլը-Միլիթէն», «Արմէ» և զգերմանական թերթերը, միմիայն կը գանձան որ Վոսփորի ամբողջութիւնները ոչինչ են այդ ռուսական մարտանաւերու առաջ, որոնք յանկարծակի պիտի ուժակոծեն Վոսփորը Գերմանական սպայակոյտի թերթը կըսէ. «Յարատեւ, Սեւ ծովի խորչերը, ռուսական մարտանաւերը ռազմափորձեր կը ընեն. այս մանօվրաներու նպատակն է որոշելու — ժամանակը, ու արագութիւնը երբ ռուս մարտանաւերը Պուրկաղ յանկարծակի գրուելու միտք ունենան»: Թուրքիա այն բոլորական յարձակումներու ժամանակը անպաշտպան պիտի գտնուի. ոչ ոք պիտի կրնայ օգնել իրեն: Միեւնոյն թերթը կըսէ թէ Ռուսիա արդէն նախապատրաստած

Երկրագործական պահքան ալ օգնեց ապրիլ եւ մայիս ամիսներուն մէջ եւ 2000 էն մինչև 2500 ոսկի բաժնեց հունա գնելու համար... օգնութիւններ եղան նաեւ կաթուղի կոսէն. Պուրկաղ Պատրիարքարանի, Ֆրանսացի և ամերիկացի միսիօնարներու և անգլիական և ռուսական հիւպատոսներու կողմէն: Երկրագործը սկսաւ յուսալ եւ ամէնքս ալ ողբերուեցանք:

Հաղիւ թէ ցանքը աւարտած էր, երբ քանի մը օրէն անձրի ի նշուները երեւցան. երկինք ամպով ծածկուեցաւ սակայն հովը թող չէր տար որ կուտակուէին անոնք, և երկիրը սոռոցէին. ընդհակառակը կը ցրուէր զանոնք և անձրիութիւնը կը արէր ամէնուս վրայ ալ:

Ի դուր եղան կուտակային հրամայած ժողովրդային բացօղակ աղօթքները որոնց ինքն ալ ներկայ կը գտնուէր քօնաքին ամբողջ պաշտօնէութեանը և ընկերակցութեանը: Վանայ զինուորական հրամանատարին որ իր հետ բերած էր օստիկաններու ջոկատներ՝ աղօթքը հանդիսաւոր ընելու համար (.) աղօթքին իրը հետեւածք հաղիւ քիչ մը աստանց ցանցեց. յետոյ օղբ բացուեցաւ. պաշտօնացաւ և յուսահատութիւնը տիրեց ամէն կողմ:

Շատ շտեւեց, երաշտութիւնը այնքան սաստկացաւ որ աղբիւր-

ներն ալ ցածքեցան. լիճեր՝ ջրի այդ բնական աւազանները չորցան և գետերուն ջուրը սկսաւ փչնալ և ցածնալ. ինչպէս Խանասորինը. այնքան որ անոնց եղբքը հող ունեցող երկրագործները սկսան իրենց մէջ կոտիլ, որուն վերջ տուաւ կուտակալը հրամայելով որ ջուրի բաշխումը կատարուի թեւեւ կողմանէ ըլլայ եւ կարգաւ:

Ինչպէս քաղաքէն նոյնպէս ալ գիւղերէն շատեր հետեւներէն ջուր բերել սկսան. եղան որ երեք ժամ հեռաւորութենէ ջուր բերելու յանձնառու եղան:

Խեղճ երկրագործը այս ճգնաժամին մէջ աչիւր արցունքով լեցուած կը տեսնէր իր ամբողջ յոյսերուն ցնդիլը: Պարզ խոտը անգամ 10—15 սանթիմէթ մեծնալէն յետոյ չորցաւ: Վանայ այդիները գրեթէ ամբողջօրէն փճացան. բանձարեղէնները, ծառատունկերը և պտուղները չորցան, նոյնիսկ մեծ ծառերն ալ վաւաւեցան, ասոնց տրեւները այնքան չորնալ սկսան որ փոշիի կը վերածուէին:

Վերջապէս հունձքին ժամանակը հասաւ և այն ասին միայն կարելի եղաւ չափիլ դժբաղդութեան մեծութիւնը: Հողեր եղան որ բնաւ հունձք չը տուին, եղան որ կիսովին հաղիւ արտադրեցին և ուրիշներ մէկ երրորդ կամ մէկ չորրորդ մասը:

Անոնք որ քիչ մը հունտ կը ցան ձեռք անցնել զալ տարուան վարուցանին համար, է՛ն բարեբաղդներն եղան:

Իսկ այն սաբսափը որ տիրեց, երբ հունձքի ժամանակն յետոյ Համիտի աղաները և չը կայի քիւրտերը քաղաք եկան իրենց իրաւունքը անգլու համար, աննկարագրելի է: Մէկ կողմէն կատարութեան հարկահաւաքները 7 բաժնին մէկը սկսան պահանջել. միւս կողմէն ճշմարիտ կամ սուտ պարտապահանջներ իրենց ասնելիքները, ուրիշ կողմէն քիւրտերը իրենց «տիչ քիւրտին», քօնաքի պաշտօնեայները և հաւաքիչները «պէտէլաթը ասքէրիլն», կաւաւածական տուրքերը, անջառի սուրքերը եւ այլն, այնքան որ ժողովուրդի մեծագոյն մասը պարտաւորուեցաւ իր ունեցածը չունեցածն ալ ծախել, տալ և յոյսերի վրայ նստիլ:

Ջարմանային այն է որ համարձակողներ եղան Ֆրանսացի արքայնորուն տուած եղներն ալ անել: Ինչ որ բողբօր տեղի տուաւ և չյաւջողեցան: Միայն երկրագործական պահքան էր որ յետագից իր պահանջներուն վճարումը, ո՛վ պիտէ մինչև ո՛րքան և ինչքան սոկոսի յաւելումով:

Երբեք այս տարուան նման երաշտութիւն չը լիջուի և ձերբը կը զարմանան:

ծրագիր ունի Պոլսոյ համար. ուս- սական Սեւ ծովի ամբողջ նաւա- տորմիզը 3 մաս պիտի ըլլայ. ա- ռալին մասը (էսքատորա) վաճա- րական նաւու գրոշի տակ վոս- փորը պիտի անցնի և հոն անգ- լիական միջերկրական ուժերու առաջը պիտի առնէ, երկրորդ մասը նորահնար թնդանթններով ուժակոծել պիտի սկսի, և եր- րորդ աւելի բազմաթիւ բեռնա- կիր նաւերով ցամաք պիտի թափէ ամբողջ Օտեսայի ու Իերսոնի զօրաբանակները (Քօրբուս), իսկ ուս կովկասեան ցամաքային ու- ժին հանգրուանը պիտի ըլլայ Պարսից Մոցը: Փրանսական մար- տանաւերն ամենաեռուն զործու- նէութիւն պիտի ցուցնեն, թէ ուսերուն պիտի օգնեն և թէ 2 միւսներն ու Սալոնիքը պիտի գրաւեն: Անգլիական նաւերը շատ ուշ պիտի հասնին կռուի վայրը:

Իսկ Պուրկալի գրաւումով Ռու- սիան իր գիտաւորութիւնը կը յայտնէ. առ ալ եղած ու վեր- ջացած է. և թէեւ պուլկար պաշտօնական օսկանը կը լռէ, բայց վիէննայի ու ընդգիմա- գիրներու թերթերէն կիմանանք թէ Ֆէրաինանու իշխանի վերջին այցելութիւնը Չարին՝ և զինքը պաշտօնապէս ճանչնալու ու խնա- մութիւն հաստատելու միակ կրա- րուկ պայմանը առ է առաջար- կուեր:

Առանց անոր ալ ուս բանա- կէն գնդապետ Էբանչիին քննու- թիւնները, որ բարձրագոյն հրա- մանաւ եկած էր պուլկար բա- նակը քննելու, առանց հետե- ւանքի չէր:

Ինչ որ ըլլայ շատ ուշ չը պիտի ըլլայ: Օր մը չէ օր մը թնդա- նութներու որոտը, թմբուկներու ցնցիլ ձայնը և ուրաներու աղա- ցակները փատիշահը իր վերջին քուէն պիտի զարթոցեն:

Ռ. Մ. Ա. Կ. Ի. Ս. Փօփրա, 2 Կեկտեմբեր

ԷԼԻ ՄԻ ՍՏԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Փորձի համար հեռացած լի- նելով իմ գործատեղից, շատ ուշ հասան ձեռքս ուղղային թերթե- րը: Այդ թերթերից մի քանի- սը հրատարակու էին իմ ուշագրու- թիւնը մի պարունի վրա, որը ինքն իրան անանում է «բանաս- տեղծ» և որը անօրէնն է Պա- րիզի ցինիական ինչ որ մը «Ա- նահիտ» թերթի: Այդ պարունը չէ ամաչում ուտեր, էլ խօսելու և ժողովրդին համոզելու թէ Սուլթանը դիմած է կոնստանին արտաքսել տալու համար Փրան- սիայից Չերալին, Բիզալին և... Իրան (Չօբանեանին): Կարգալուց յետոյ այս տղերքը չեմ կարող զսպել իմ զղուանքը զէպի այդ ստախոս հրապարակագիրը, որը պատու է համարում իրան դա- սալիք Անմեղեանի տեղը դնել իր անձը: Պոլսից «Թայմզ»-ին գրուածը «Պոլսական թղթակցու- թիւն մը» չէ, ինչպէս ասում է Չօբանեան «Անահիտ»-ում, այլ «հեռագիր» է. և տեսք թէ ի՞նչ է ասում այդ հեռագիրը: «Սուլ- թանը խնդրում է Պ. կոնստանից Փրանսայի հողից արտաքսել Չե- րալին, Ահմէտ Բիզալին և Ան- մեղեանին»: այս հեռագիրը հրա- տարակել են և մեր ազգային

թերթերը: Եթէ Չօբանեան ինք- ղինքը Անմեղեանի տեղն է գը- նում, մենք ընդունում ենք:

Հիմա հարց է գալիս թէ ճիշտ օ՞վ է «Իսաչաղոյ», տիրապետի ար- ժանի. երբ խնդիր է ծագում Գալֆայանի մասին:

Չօբանեան իր թերթում հրա- տարում է և «հարձու» թղթակ- ցին «բացատրութիւն տալ ի իր ունեցած ապացոյցները մէջտեղ դնելու»: Եւ թողնում եմ վահագ- նին այդ պաշտօնը, բայց չեմ կարող լռել երբ մօտից, շատ ու շատ մօտից գիտեմ թէ Չօբա- նեան բաժակ է առաջարկել «Թուր- քերի կենացը», Պարիզում, կա- ֆէ վոլտէրի սրահում, երբ երի- տասարդ թուրքերը սեղան էին տալիս: Սեղանին մասնակցում էր և «Անահիտ»-ի կուսքը Բա- շալեան: Բայց յաջորդ օրը դա- սալիք է լինում Չօբանեան Պա- րիզի «Հայրենասիրական միու- թիւն»-ից, որին անդամ էր նա ճաշկերոյթից առաջ: Ասածնե- րը վկայում են այն ժամանակ- վայ միութեան անդամները և Պարիզի հայերից շատերը:

Ս. Լոնտոն, 25 Նոյեմ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓրօվիճէՆՍ, 12 Նոյեմ.

Երկու ամիսներ է վերքաղա- քիս հայ տուներու մէջ զրոյց կը շրջէր թէ Երեսփոխանական վարչութիւն մը պիտի կազմուի ազգային և կրօնական գործերը վարելու համար:

Երբ ազգին խօսքը կար, ժո- ղովորդը բաւական ուրախ էր:

Շատ մը ընտանիքներու հայրեր հունձքերուն փճանալը տեսնելով, և մլուս կողմանէ բոնի պահանջներէն վախճալով, ձգցին իրենց կիները և զաւակները լիոնները փախան. մի- նակ Աւերակ գիւղէն հարիւր հոգի մէկ զիչերուան մէջ խոյս տուին զէ- պի Պարսկաց և Ռուսիոյ սահմա- նազուիւր: Քարագանաբզ և Արճէլ զիւղերու ժողովրդէն, առջինէն 150 հոգի և երկրորդէն 100 հոգի, ցրուեցան. Նոր Գիւղէն 10 ընտանիք կին, աղջիկ և տղաքներ քիւրտե- րէն տարուեցան իբրև պատանգ: Երբ այս եղանակին կարօտութիւնը այսքան սոսկալի է, ի՞նչ պիտի ըլ- լայ ձմեռը, ի՞նչ պիտի ըլլայ երեսի վրայ մնացած և քիւրտերէն տա- րուած կիներուն, տղաքներուն վի- ճակը, ի՞նչ պիտի ըլլայ շատ մը զիւղերու ժողովուրդը որ ուտելու հաց անգամ չունի:

Յաւալի է որ փախչողները Ռու- սիոյ սահմանազուիւր կը դիմեն իբրև փրկութեան վար ուրկից Եթէ օր մը վարուելն ամէն զուս գոց պիտի գտնեն իրենց հայրենի օճախը դառ- նալու համար, ինչպէս պատահեցաւ ընդհանուր կոտորածին առթիւ:

Տղաքներ, մանչ և աղջիկ. կա- տարեալ մերկութեան մէջ են. շնորհքով ընտանիք մը կը ճանչնամ որ այսօր ունի միմիայն մէկ հա- զուստ և այն ալ կը կրէ իրենց

տան զուրսի հետ յարաբերութիւն ունեցող անձը. առայժմ օղը խիստ չէ և ցարաբ չտանջէր, սակայն վաճղը, ի՞նչ պիտի ըլլայ կացու- թիւննա՞ր: Երբ ձիւնը ծածկ գիտինը, քամին փչէ և ստորի սկսի, պիտի կրնանք դիմանալ ցուրտին և անօ- թութեան:

Յորենի գինը շատ բարձրացած է. սովորական ժամանակ չափը 12 դր. է և միջին գինը՝ 20 դրոյ: Այս վերջին տարին 40ի ելաւ, զարնան վարուցանին ժամանակ 75 և յետոյ իջաւ 60ի: Երբ ն մարուեցաւ թէ հունձքը քիչ պիտի ըլլայ և չորու- թիւն կայ այն ատեն բարձրացաւ մինչև 85. ո՞վ գիտէ զեռ որքան առասպելական գին մը պիտի ունե- նայ այն՝ երբ ձիւնէն ճամբայները գոցուին և զուրսէն ցորեն չգալն օգուտ քաղելով ձեռքերնին ցորեն ունեցողները ժողովուրդը շահագոր- ձեն:

Ինչպէս քաղաքին նոյնպէս ալ զիւղերուն մէջ ամէն գործ կաղնի կաղն կընթանայ. առեւտուր չկայ, փոքրիկ խանութպանները գրեթէ ոչինչ կը շահին. անգործներու թի- ւը կաւելնայ և անոնք որ ունիցէ զբաղում մը ունին, շատ քիչ կը վճարուին: Պօլիս երկաթու ճամբան խափու գոցած են, թոյլ չեն տար որ մէկ տեղէ միւսը երթանք. մեր ամբողջ ուժերը ջլտաել կուզուի որ տանջուինք:

Ընտրութեան օրը Յովսէփ Եպիս- կոպոս Սարաճեան աղանակերպ իջաւ Փրովիտէնսի ժողովարա- հին մէջ. սրահը լիքն էր 3—4 հարիւր հայերով, ամէնքը կը դիտէին սրբազանի կեղծ, բայց կրակոտ շրթունքները. յանկարծ նա ելաւ և սկսաւ սահմանադրա- կան կանոնները բացատրել մաս առ մաս, երկույն բարակ, Սահ- մանադրութիւնը չարչրկելէն վերջը ըսաւ. այս երկրին մէջ երեսփոխանական վարչութիւն մը կընայ զուտ կրօնական ըլլալ, որովհետեւ հոս ազգային ունէ գործ չունինք:

Հասկցանք սրբազանի թաղուն նպատակը, բայց ժողովրդէն ոչ ոք ելաւ այդ նպատակը պարզե- լու. հասկցողները լուս մնացին, մտածելով որ լուսութիւնը խոհե- մութիւն է, որովհետեւ ժողո- վուրդը պարզ մարդոց խօսքին չի հաւատար, այլ միմիայն սրբա- զաններու խօսքին կը հաւատայ: Սարաճեանը արգեօք ի՞նչու կրօնական և ազգային վարչու- թիւնը չի բարձրէ զատեց. ժողո- վուրդը չի խորհր, բայց Սա- րաճեանը կը խորհր ու կը գոր- ծագրէ: Սարաճեան կը հասնայ թէ ինքը Ամերիկայի հայութեան քուէով ընտրուած հովիւ չէ, և եթէ այսօր ամերիկահայերը ի- բրին ըսէ թէ՛ Սարաճեան զու հոս գործ չունիս, իա պիտի մեկնի առանց ձայն մը հանելու: Սակայն խորամանկ Սարաճեան անցեալէն փորձուած կրօնական ժամկոչներ ստեղծեց որ իր մէջ- քին աւարճուիւր ամերիկեան սօլարներով լեցնէ:

Հակառակ պարագային, երբ

զինքը և ամենէն աւելի իրենները, Ողորմեցէք, մեզի՞, Էղբայրներ, զուք որ օտար երկրի մէջ էք և քիչ շատ կը վասակիք. զթագէք մեր վրայ զուք որ զիչերները պատառ մը հաց ունիք ուտելու և անկողին մը քնանալու:

Եթէ Աստուած մը կայ վերը որ իր զաւակներուն օգնութեան կը հասնի, թող արգահատանք և խիզ- գնէ ձեր սրտերուն մէջ ձեր եղբայր- ներուն ու քոյրերուն համար՝ որոնք յուսահատական ճիգերով զեռ կը դի- մայրաւեն մահը, որոնք չեն ուզեր ուրանալ իրենց պատկանական հա- ւատքը, կրօնքը և չեն ուզեր ծա- խել պատիւնին:

Կրսեն թէ Աստուած Մարգար է և պահապան հրեշտակն է զինքը պաշ- տողներուն զոր երեսի վրայ ձգէր, մեր քաջամները ալ չափը անցան, Ան չլսեր մեզի, ո՛ւր է, ո՛ր այդ Աստուածը բռնէ մեզ, եղբայրներ, կաղաչենք ձեզ:

Վան, 9 հոկտ.

Ժողովուրդը ձայն բարձրացնէ
չանի Ամերիկայէն վնասելու հա-
մար, ան պիտի մնա բարով ըսէ
Գոլոմպոսի արձանին և զբայան-
ները տօլարներով լեցուն ճամ-
բայ ելլայ:

Գ. Ա.

ՎԱՌՆԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ

ՎԱՐԺ. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

Վասնայի ազգ. վարժարանաց հո-
գարարձու թիւնը առանց խտրութեան
պաշտօնէ դարձեցանք և ամբողջ
ուսուցչական մարմինը:

Հոգարարձու թիւնը շատ լաւ գրա-
նուած է իր այս որոշմանը մէջ մի
քանի պայմանաժամով ընդունուած
ուսուցչիներու նկատմամբ. հակա-
ռակ պարագայի մէջ լինք պատասխա-
նատու պիտի մնար աշակերտներուն
պարագա տեղը ժամաւաճառ ըլլալ-
ունն համար:

Մենք չենք կարծեր որ նորընտիր
ուսուցչիներուն մէջ չհրաւիրուին
զարձեալ անոնք որոնց ալ ժամի քը
արդէն կը գնահատուի:

Պիւսակէի խնդիրը եւս կարեւոր
տեղ մը կը բռնէ այս խնդրոյն մէջ:
Իհարկէ այդպիսի մեծ պիւսակէ մը
բանալը չի վերցնիր վասնան, ո-
րովհետեւ վարժարանի հաստատուն
եկամուար կը կազմէ աշակերտաց
զարգացական տուրքերը. ծախքին
զոնէ մէկ երրորդ մասը չեն կազմեր:
Մեր վարժապետները պարտին ամէն
առարկայի համար առհասարակ դա-
սախօսել:

Մեզի համար պէտք չեն անպատ-
ճառ մասնագէտ, բնազէտ, աշխար-
հագէտ, լեզուաբաններ եւ այլն: Կիմ-
նակալ չի պիտի կառավարենք,
այլ պարզ նախակրթարան մը, ուր
մեր սղաքը նախնական ուսում պի-
տի առնեն իր ամէն մասերով:

Մեզի բնաւ հետաքրքրութիւն չի
պատճառեր տեղւոյս ուսուցչական
խումբին պաշտօնէ դադարիլը. այլ կը
յուսանք թէ հոգարարձու թիւնը
պէտք եղած միջոցները ձեռք պիտի
առնէ զպարտի վիճակը բարեփոխու-
համար:

Թող չկարծուի թէ այս պարագա-
ներու մէջ խեղճ վարժապետներն են
միայն տուժողը, այլ եւս աւելի մեր
մանուկները, որոնք փոքրիշատէ
պատրաստ դաստիարակներու մեծ
պէտքը ունին, ամիսներով պարագա
չեն կրնար մնալ սորվածնին ալ
մոռնալու համար:

ՄՈՒՐԱՏ-ՍՈՒՐԱՏ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

— Բնիկ Ա. Պոյսեցի. Պ. Թաղէոս
Գէորգեան որ գրեթէ երկու տա-
րի առաջ մեկնած է. կը խնդ-
րուի ամէն անոնցմէ որոնք սր
տեղեկութիւն ունին հաճին խըմ-
բագրութեանս իմացնել:

Ասկից գրեթէ 3-4 ամիս ա-
ռաջ անոր Ռուսմանիոյ մէջ զըտ-
նուիլը իմացուած է:

— Տարտաճէլցի Խաչիկ Յ. Ա.
ճէմեան անուամբ պարոնը որ ժա-
մանակաւ նիւ-Եօրք կը բնակէր,
ուր որ է թող հաճի իր հասցէն
զրկել խմբագրութեանս, կամ ով
սր գիտէ անոր տեղը թող հաճի
նոյնպէս իմացնել մեզ:

—)(—

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Յրանայի նանսի քաղաքին մէջ
կուսանին 25 հայ երիտասարդներ.
ատոնց մեծ մասը բժշկութիւն կը
սովորի, երկու հոգի երկրագործու-
թիւն, որոնցմէ մին աւարտելով իր
ուսումը կերթայ Էջմիածին այնտեղ
գիւղատնտեսութեամբ պարագելու
նպատակաւ:

— Անիի աւերակներու պահպան
Ստեփան վարդապետի հետանալն յե-
տոյ այնտեղ մնացած է հայ գաղթա-
կան պահպան մը: Եւ Անիին այցե-
լողները, մանաւանդ օտարազգի դիտ-
նակաւորները շատ անմխիթար կը վե-
րադադնան: Նոյնիսկ հիւրերուն
հանգստանալու համար յարմար սեն-
եակներ չը կան եղեր: Մօտ ժամա-
նակներս Բեթլեհեմի Կէն հոն զա-
ցեր է հոշակաւոր բրօքէտօր մը: ա-
նոր բազմէն Սեբաստիոսի Կրթա-
բարձր դպրոցը մը հետը ըլլալով հարկա-
ւոր բացատրութիւնները տուած է
աւերակներու մասին:

— Հրապարակագիր յայտնի Զան-
չեանի յորեւեռը Մոսկուայի մէջ
շատ փառատոր եղեր է. յարկելի յո-
րեւելարը կոնդակ ստացեր է վեհա-
փառ կաթողիկոսին և նամակ Օրթո-
տան Պատրիարքին:

— Ռուսական լրագիր մը կը հա-
ղորդէ թէ հոշակաւոր նկարիչ Ալվա-
զովսքի ծանր հիւանդ է և Մոս-
կուայէն բժշկապետ Սիրիցին հրա-
ւիրուած է Թէոդոսիա բժշկելու հա-
մար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիոյ գործերը շատ անյա-
շուկ կերթան Թրանսվալի մէջ.
պարտութիւն պարտութեան վրայ
կը կրեն Ալպիսնի զաւակները.
Կատակերէն վերջը յաղթունցաւ
Լօրտ Մէթհուէն, և բաւական
կորուստով, անոր ետեւէն զխա-
ւար հրամանատար Պիւլլէր կռիւի
բանուելով տասը թնդանոթ և
բաւական մեռելալու զիրտուր
ձգեց Պօէրնբուէն ձեռքը: Հէր-
պէրա Պիլմարք, Պերլին ճաշկե-
րոյթի մը մէջ յայտարարած է,
որ Լատամիտ անձնատուր եղած
է, թէեւ այդ լուրը մինչեւ օրս
չէ հաստատուած:

Այս բոլոր նոր պարտութիւն-
ներու միջոցին բաւական Անգ-
լիական նշանաւոր սպաներ սպա-
նուած են, բազմաթիւ զօրք,
իսկ գերուածները աւելի:

Անգլիական այս անյաշուկու-
թիւնները կը քաջալերեն Հա-
բաւային Ափրիկէի բոլոր այն
տարրերը, որոնք մինչեւ օրս
Անգլիոյ զօրութեանէն վախնալով
չէին միացած Պօէրնբուէն հետ,
կը վախցուի որ Անգլիոյ դէմ
ապստամբին: Այդպէսով Անգլիոյ
գործը աւելի պիտի դժուարա-
նայ, որովհետեւ անգլիան ստի-
պուած պիտի ըլլայ թէ ներքին
ապստամբութիւնները ճնշել և
թէ պատերազմիլ Պօէրնբուէն
դէմ: Այսուհետեւ Պօէրնբուէն
պաշարուած քաղաքները օղա-
տելու գործը եթէ ոչ անհնարին
զոնէ շատ դժուարին պիտի ըլ-
լայ անգլիացիներուն համար:

— Ռուսիոյ արտաքին գործոց

նախարարութիւնը պաշտօնապէս
յայտարարած է թէ՛ Նով. Վրէմիա
թերթին շուքէն առաջնորդողը
համաձայն չէ կառավարութեան
տրամադրութիւններուն:

— Անգլիական բոլոր թերթերը
մեծ ցաւ կը զգան զխաւոր հրա-
մանատար Պիւլլէրի պարտու-
թեան համար, կընդունին որ
հարուածը սոսկալի է, բայց կաշ-
խատին ժողովուրդը հանգարա-
ցընել, համոզելով որ այսպէս թէ
այնպէս Անգլիան ա՛հէն ճիգ պիտի
թափէ յաղթելու:

— Դեկտեմբեր 4ին կ. Պօլսէն
«կաղէթ» Պրանքֆորթին կը հե-
ռագրեն:

Երկու օրէ ի վեր է որ Մահ-
մուտ փաշան, Սուլթանի աներ-
ձագը և իր երկու մանչերը ան-
հետացած են: Մահմուտ փաշան
իբր աղատամիտ ճանչցուած էր:
Փաշան իր կնոջը նամակ մը թու-
ղուցած է, որով կը հաղորդէ թէ
ինք Պօլսը մշտապէս կը թողու,
որովհետեւ ներկայ պայմաններու
մէջ իրեն համար անկարելի է
այդ քաղաքին մէջ ապրիլը: Պա-
լատի մէջ վշտախառն մեծ սար-
սափ կը տիրէ:

Պալատէն Թուրքիոյ բոլոր օ-
տարերկրեայ հիւպատոսներուն և
գործակատարներուն հեռագրուած
է Մահմուտ փաշան զտնելու հա-
մար:

— Դոյն թերթին Պօլսէն կը
հեռագրէն թէ երկարատեւ քըն-
նութեան վերջ Սուլթան Համի-
տը հաստատած է Պալատի
երկաթուղիի շինութեան պայ-
մանագրերը: Միջազգեքը ու-
սումնասիրող յանձնաժողովը ար-
դէն Պալատաւ հասած է. տասը
օր հոն պիտի մնայ և անմիջա-
պէս պիտի ուղևորուի Պասրա:

— Պոլսէնու յիշեալէն (Ամերիկա)
կը հեռագրեն թէ Արժէնտինի
լրագիր մը կառավարիչ պատգա-
մաւորութիւն մը զրկել Պօէրնե-
րուն, եթէ անոնք պարտուին, և
անոնց առաջարկել Բատակոնիա
երկիրը:

— Գերմանական թերթ մը կը
յայտարարէ թէ Անգլիոյ վիճակը
հիմա գէշ պիտի ըլլայ նաեւ
Հնդկաստանի մէջ, որովհետեւ
Թրանսվալի մէջ Անգլիոյ կրած
պարտութիւններէն Հնդկիկները
կրնան համոզուիլ թէ Անգլիա
անյաղթելի չէ և անոր զօրքերը
չեն դիմանար երկարատեւ կռի-
ւի: Եւ կաւելցնէ. Հնդկաստանի
մէջ Անգլիան միայն 73000 եւ-
րոպացի զօրք ունէր, ասոր մէկ
մասը հիմա Թրանսվալ գացած է,
Անգլիոյ հակառակորդներէն մին
կրնայ այս պատահարներէն օգ-
տուիլ և Հնդկաստանը ապստամ-
բեցնել:

— Պերլինի «Տակալատ» թեր-
թը կը հաղորդէ թէ Միացեալ
Նահանգներու Բրետտօրայի հիւ-
պատոսը՝ որ Ամերիկա կը վերա-
դառնայ նախագահ Քրիկերին
մէկ նամակը կը տանի, որով Ա-

մերիկայի նախագահին և քաղա-
յի ժողովին կը հարցնէ թէ
արդեօք իսկապէս Անգլիոյ և
Ամերիկայի միջեւ զաշնակցու-
թիւն կայ. և եթէ այդպիսի բան
մը գոյութիւն չունի, չի կրնա՞ր
Պօէրնբուէն օգնութեան հասնիլ,
նախաձեռնարկ ըլլալով որ աշ-
րութիւնները միջամտեն և Պօէր-
նբուէն համար պատուարեր վերջ
մը գնեն այս պատերազմին:

— Յրանայի ինժինիէօր մը
ծրագիր կազմած է ճիւղաւ-
թարի տակէն «թիւնէլ» շինելու:

— Թուրքիոյ լրագիրները կը
հաղորդեն թէ ներառքին գոր-
ծոց նախարարի նախագահու-
թեամբ յանձնախումբ մը պիտի
կազմուի, որուն նպատակն է
քննել Պօլսոյ օտար փոստերու
զործունէութիւնը:

ԹԱՏՐՈՆ «ԱՆԿԷԼ ՍԼԱՎՈՅ»

«Վէսէլլօ» հայ թատերական
խումբը, այս գիշեր, Դեկտ. 11,
պիտի ներկայացնէ՝ առաջին ան-
գամ ըլլալով «Նարայի Աւազակ-
ները» արամ-գօմէտի 4 արար:

Վազը կիրակի, կէս օրէն վերջ,
պիտի ներկայացնէ՝ առաջին ան-
գամ ըլլալով ցերեկեայ ներկա-
յացում «Գիւղացի Աղնուականը»
հոշակաւոր Մօլիէթի գօմէտինե-
րէն տաճկերէն կեանքի վերա-
ծուած 3 արար:

Վազը կիրակի գիշեր, Դեկ. 12,
առաջին անգամ ըլլալով պիտի
ներկայացնէ՝ «1 1/2 պահականի
հարստութիւնը» արամ-գօմէտի 4
արար:

Ժմնաստիք, արօրպաթ և պա-
լէթ Օր. Քաթիկոսի կողմանէ:

Արարուածներու միջոցին զի-
նուարական երաժշտական խումբը
հատընտիր կտորներ պիտի նուա-
զէ:

ՊՕՐՍԱ

Վառճա 10 Դեկտեմբեր		
Վախ	Լիպրա	Յրանք
ՊՈՒՂՏԱՅ	53-57	9-9.50
ՄՐՍՒՐ	54-56	5-6.20
ՍՐԲԱ	—	—
ԵՆՒԼԱՅ	—	—
ՅԱՍՈՒԼԵԱ	—	—
ՏԱՐԸ	—	—
Առապա	Լիպրա	Յրանք
ՊՈՒՂՏԱՅ	55-60	9.50-11.20
ՍՐԲԱ	38-44	6.50-7.40
ԵՆՒԼԱՅ	35-36	5.20-5.30
ՄՐՍՒՐ	55-57	6-7
ՏԱՐԸ	55-58	5.50-6.00
ՅԱՍՈՒԼԵԱ	100 յիւ	12-20

Հէր կիւն կէլն մալ		
ՊՈՒՂՏԱՅ	25-30	առապա
ՍՐԲԱ	8-10	»
ԵՆՒԼԱՅ	1-2	»
ՅԱՍՈՒԼԵԱ	3-4	»
ՄՐՍՒՐ	3-4	»
ՏԱՐԸ	1-2	»

Առապա մուսուլէթի նարալէն 21.60
Ֆրանք հիսապը իլէ տիր: